



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 1283/02/2009թ.  
Նախագահող դատավոր՝ Հ. Աբրահամյան  
Հ. Խաչատրյան  
Գ. Արզումանյան

Քաղաքացիական գործ թիվ 1283/02/2010թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«25» փետրվարի 2010թ.

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով՝ կազմով՝

նախագահությամբ դատավոր՝ Զ. Օհանյանի  
դատավորներ՝ Ի. Կարապետյանի  
Գ. Հարությունյանի

դռնբաց դատական նիստում քննելով Մ. Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 30-ի որոշման դեմ՝ ըստ հայցի Մուշեղ Գուրգենի Գրիգորյանի ընդդեմ Կարինե Չերքյազի Առստամյանի՝ բնակելի տունը համատեղ սեփականություն ճանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր Մուշեղ Գուրգենի Գրիգորյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող Կարինե Չերքյազի Առստամյանի՝ Ստեփանակերտ քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 41 բնակելի տունն ընդհանուր սեփականություն ճանաչելու պահանջով, հայցը հիմնավորելով նրանով, որ վիճելի տունը թեկուզ կառուցել է ինքը, սակայն սեփականության իրավունքով պատասխանողի անվամբ գրանցվել է նրա հոր՝ Չերքյազ Առստամյանի կողմից արված նվիրատվության պայմանագրի հիման վրա: Ամուսնության ընթացքում վիճելի տան վրա բավականին ներդրումներ է կատարել. իր միջոցներով տան բակում կառուցել է երկու ջրավազան, վերակառուցել է տան պատշգամբը, ավելացրել սենյակ: Երկար տարիներ ինքը կնոջ և երկու երեխաների հետ միասին բնակվել են վիճելի տանը: 2009թ. լուծվել է իր և պատասխանողի ամուսնությունը: Անբարյացակամ հարաբերությունների պատճառով ներկայումս ինքը նշված տանը չի բնակվում:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2009թ. նոյեմբերի 16-ի վճռով հայցը մերժվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 30-ի որոշմամբ հայցվորի վերաքննիչ բողոքը մերժվել է. առաջին աստիճանի դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ վիճելի բնակելի տունն իր կողմից կառուցված լինելու վերաբերյալ հայցվորի բերած բոլոր փաստարկները ու դրանք վկայակոչող ապացույցները վերաբերելի չեն, ուստի ստորադաս դատարանի կողմից դրանց գնահատական չտալը չի կարող ազդեցություն ունենալ սույն քաղաքացիական գործի ճիշտ լուծման համար:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել հայցվոր Մ. Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկով. Դատարանը հաստատված համարելով, որ վիճելի տունը կառուցվել է Չերքյազ Առստամյանի կողմից, չի հետազոտել հայցվորի կողմից ներկայացրած ապացույցները՝ այն է՝ դատարան ներկայացրած վիճելի տան կառուցմանը մասնակցած 55 վարպետների գրավոր վկայությունը: Դատարանը հիմք ընդունելով միայն իրավական փաստաթղթերը, բազմակողմանի չքննարկելով ներկայացված ապացույցները, մերժել է հայցը:

Վճռաբեկ բողոքը քննության ընդունելը հիմնավորվում է հետևյալ փաստարկով.

բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ նմանատիպ գործերով Գերագույն դատարանը որոշում չի ընդունել:

Դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է ծանր հետևանքներ, և ինքն անօրեն գրկվել է կառուցված բնակելի տնից:

Բողոք բերած անձը պահանջել է բեկանել վերաքննիչ դատարանի որոշումն ու առաջին աստիճանի դատարանի վճիռը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ստեփանակերտ քաղաքի Բաղրամյան 124 (ներկայումս Բաղրամյանի 1-ին նրբանցք 41) հասցեում Չերքյազ Ավագի Առստամյանին 1984թ. նոյեմբերի 29-ին հատկացվել է 800 քառ. մետր մակերեսով հողամաս՝ բնակելի տուն կառուցելու համար:

2. Չերքյազ Ավագի Առստամյանը 1986թ. ստացել է շինարարության թույլտվություն նշված հասցեում բնակելի տուն կառուցելու վերաբերյալ:

3. 1986թ. հունվարի 17-ին Չերքյազ Առստամյանի և Ստեփանակերտ քաղաքի գլխավոր ճարտարապետի միջև կնքվել է տիպային պայմանագիր՝ բնակելի տան կառուցման պայմանների և ժամկետի վերաբերյալ:

4. 1989թ. հոկտեմբերի 5-ին ավարտվել է Բաղրամյան 124 հասցեում գտնվող երկհարկանի հինգ բնակելի սենյակներից բաղկացած 99.45 քառ.մետր բնակելի մակերեսով և 149.61 քառ. մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան կառուցումը:

5. Կառուցված բնակելի տունը գրանցվել է որպես Չերքյազ Ավագի Առստամյանի անձնական սեփականություն:

6. Չերքյազ Առստամյանը 1989թ. նոյեմբերի 1-ին բնակելի տունը նվիրել է դստերը՝ Կարինե Առստամյանին:

7. Մուշեղ Գրիգորյանի և Կարինե Առստամյանի ամուսնությունը գրանցվել է 1989թ. մարտի 19-ին, իսկ նրանց ամուսնությունը լուծվել է 2009թ. ապրիլի 22-ին:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի և հիմնավորումների սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է մերժման, իսկ դատական ակտը՝ թողնելու անփոփոխ, հետևյալ պատճառաբանությամբ.

Գործող օրենսդրության համաձայն սեփականության իրավունքի պաշտպանության մասին հայց հարուցելու համար պետք է պահպանված լինեն սեփականության հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջները:

Սեփականության իրավունքի ճանաչման հայց ներկայացնելը սեփականության իրավունքի պաշտպանության եղանակներից է, որը նախատեսված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 273-րդ հոդվածով, համաձայն որի՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել ճանաչելու իր սեփականության իրավունքը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Այսինքն՝ գործով ապացուցման պարտականությունը կրում են կողմերը:

Գործի նյութերից երևում է, որ Մուշեղ Գրիգորյանը՝ հարուցելով հայց, այն հիմնավորել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, համաձայն որոնց՝ ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը...: Այսինքն, հայցվորն ի սկզբանե չժխտելով վիճելի բնակելի տունը սեփականության իրավունքով պատասխանողին պատկանելու հանգամանքը, իր հայցը հիմնավորել է նրանով, որ իր «միջոցներով վիճելի տան բակում կառուցել է երկու ջրավազան, գրունտային հող է լցրել տան բակը, կատարել ինչպես վերակառուցման աշխատանքներ, կապված սենյակ ավելացնելու հետ, այնպես էլ տան վերանորոգման հետ կապված»:

Առաջին ատյանի դատարանի դատաքննության ընթացքում հայցվորը փոխելով դիրքորոշումը, պնդել է, որ վիճելի տունն ամբողջովին ինքն է կառուցել:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի ուժով կրելով ապացուցման պարտականություն, հայցվորն որևէ պատշաճ ապացույցով չի հիմնավորել իր պահանջը, այսինքն՝ չի ներկայացրել ապացույցներ այն մասին, թե արդյոք համատեղ սեփականություն ստեղծելու համար որևէ համաձայնություն է ձեռք բերել այն անձի հետ (Չերքյազ Առստամյանի), ում օրինավոր կերպով հողամաս էր հատկացված անհատական բնակելի տան շինարարության համար, կամ էլ հայցվորի կողմից կատարված աշխատանքներն արդյոք նշանակալի չափով ավելացրել են վիճելի տան արժեքը: Քանի որ բնակելի տան (կամ մի մասի) կառուցմանը քաղաքացու փաստական մասնակցությունը

(ֆիզիկական կամ նյութական), եթե չկա համաձայնություն կամ օրինական կառուցողն առարկում է, չի կարող հիմք հանդիսանալ փաստական մասնակցին համասեփականատեր ճանաչելու համար:

Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն գործով հիմնավոր են դեկավարվել բնակելի տունն օրինական կառուցողի սեփականությունն է սկզբունքով և ոչ վերաբերելի ճանաչել հայցվորի կողմից բերված բնակելի տան շինարարական աշխատանքներին մասնակցած վարպետների վկայությունները: Մանավանդ, որ պատասխանող Կարինե Առստամյանի կողմից վիճելի բնակելի տան նկատմամբ սեփականություն ձեռք բերելու հիմքերը (նվիրատվության պայմանագիրը և այլն) հայցվորի կողմից չեն վիճարկված:

ԼՂՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել, տնօրինել և ժառանգել օրինական հիմքերով որպես սեփականություն ձեռք բերած գույքը: Սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր սեփականության հարգանքի իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել իր սեփականությունից այլ կերպ, քան միայն ելնելով հասարակության շահերից և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններում:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ գնահատել է գործով ձեռք բերված ապացույցները և կիրառել դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերը, հետևաբար, վճռաբեկ բողոքն անհիմն է և հիմքեր չկան վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից, դեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, ԼՂՀ Գերագույն դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մուշեղ Գրիգորյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 30-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

Զ. ՕՅԱՆՅԱՆ

Դատավորներ՝

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ